ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ
Հասարակական գիտություններ № 2, 1959 Общественные науки

Ն. Ա. Պառնասյան

ԵՆԹԱԿԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ենթակա երկրորդական նախադասությունների, որպես առանձին տեսակի, մասին հայ քերականագիտության պատմության մեջ առաջին անգամ խոսել է մեծ հայագետ Մ. Աբեղյանը։ Նրանից առաջ հայ քերականները խիստ տարբերակում չեն դրել երկրորդական նախադասությունների կատարած շարահյուսական ֆունկցիաների միջև և այդ պատճառով միևնույն խմբի մեջ են մտցրել բոլորովին տարբեր շարահյուսական ֆունկցիա ունեցող երկրորդական նախադասություններ։ Այսպես, օրինակ՝ Ստ. Պալասանյանը ենթակա երկրորդական նախադասությունները խնդիր երկրորդական նախադասությունների հետ միասին մտցնում է «դոյական» նախադասությունների խմբի մեջ, իսկ Ստ. Մալխասյանը և Հ. Թումանյանը «լրացուցիչ» երկրորդական նախադասություններ խմբի մեջ («լրացուցիչ» տերմինը ռուսերեն „дополнение" տերմինի թարգմանությունն է)։ Նրանք այդ նույն խմբի մեջ են մտցնում նաև խնդիր և ստորոգելիական երկրորդական նախադասությունները։

Մ. Աբեղյանի մոտ ես ենթա՛կա և խնդիր երկրորդական նախադասությունները դեռևս լրիվ չափով սահմանազատված չեն իրարից։ Այդ երևում է նրանից, որ նա ենթակա և խնդիր երկրորդական նախադասությունների կապակցությունը քննարկում է միևնույն ենթագլխում և խնդիր երկրորդական նախադասությունն է համարում մի շարք նախադասություններ, որոնք իրենց բնույթով ենթակա են[1]։

Ենթակա երկրորդական նախադասությունը հանդիսանում է գլխավոր նախադասության ենթական, այսինքն ցույց է տալիս գլխավոր նախադասության մի բան անող կամ եղող առարկան։ Նա տարբերվում է նախադասության սովորական ենթակայից նրանով, որ ցույց է տալիս գործողություն կատարող առարկան ավելի հանգամանորեն, նկարագրության եղանակով։

Ենթակա երկրորդական նախադասությունները օգտագործվում են երկու դեպքում.

1. Գլխավոր նախադասության մեջ ենթական բոլորովին բացակայում է, և երկրորդական նախադասությունը անմիջաբար կատարում է ենթակայի պաշտոնը. օրինակ «Չէ, լավ է կրկին, որ երկրում հնամ, ծաղրի նեղության մի կերպ դիմանամ» (Հ. Թ., 19)։ Այստեղ գլխավոր նախադասությունը՝ «Լավ է կրկին», չունի ենթակա. որպես այդպիսին հանդես է գալիս երկրորդական նախադասությունը, որը ցույց է տալիս, թե ինչի մասին է խոսվում գլխավոր նախադասության մեջ։

---

[1] Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 289։

2. Գլխավոր նախադասության մեջ թեև կա ենթակա, սակայն այն արտահայտված է որևէ դերանվամբ՝ հարաբերյալով և քանի որ վերջինս չունի կոնկրետ նյութական նշանակություն, կարիք է զգացվում լրացնելու այդ բացը։ Այս դեպքում արդեն երկրորդական նախադասությունը բացահայտում է գլխավոր նախադասության դերանվամբ արտահայտված ենթական՝ հարաբերյալը, նյութական բովանդակություն տալով նրան և փաստորեն հենց ինքն էլ հանդիսանում է գլխավոր նախադասության ենթական։ Հարաբերյալի առկայությունն այստեղ ձևական նշանակություն ունի և ծառայում է գլխավոր ու երկրորդական նախադասությունների կապի ուժեղացմանը. օրինակ՝ «Փոդոցը դարձավ եռացող աշխատանքի կաթսա և նրանք, որոնց ուրախացնում էր այդ դժվար աշխատանքը, ապրում էին գործի հաջողությամբ» (Ա. Բ., ՍՅՍ, 171)։ Այստեղ «որոնց ուրախացնում էր այդ դժվար աշխատանքը» երկրորդական նախադասությունը ոչ թե անմիջապես կատարում է գլխավոր նախադասության ենթակայի պաշտոնը, այլ բացահայտում է նրա՝ «նա» դերանվամբ արտահայտված ենթակայի նյութական նշանակությունը։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ենթակա երկրորդական նախադասություններ են գործածվում մեծ մասամբ այն ժամանակ, երբ գլխավոր նախադասության ստորոգյալը արտահայտված է լինում չեզոք և կրավորական սեռի բայերով կամ լինում է բաղադրյալ. ըստ որում երկու դեպքում էլ այն ցույց է տալիս դրություն կամ վիճակ։ Ենթակա երկրորդական նախադասության միջոցով նկարագրվում է այն առարկան կամ երևույթը, որը գտնվում է տվյալ դրության կամ վիճակի մեջ. օրինակ «Պարզ էր, որ աներոջ մահը մազի չափ չէր խլրտում նրա ազգակցական զգացումների նիրհը» (Շ. Ա. 17)։ Այս բարդ ստորադասական նախադասության մեջ գլխավոր նախադասությունը արտահայտված է միադիմի բաղադրյալ ստորոգյալով՝ «պարզ էր», որը ցույց է տալիս վիճակ, դրություն։ Այստեղ ենթական բոլորովին բացակայում է, որի պատճառով նախադասությունը մնում է թերի և ամբողջական միտք չի արտահայտում։ Հայտնի չէ, թե ինչն է պարզ։ Այդ բացահայտվում է երկրորդական նախադասության միջոցով, որը կատարում է գլխավոր նախադասության ենթակայի պաշտոնը։

Ենթակա երկրորդական նախադասություն պարունակող բարդ ստորադասական նախադասություններ են օգտագործվում նաև այն դեպքում, երբ կատարվում են ընդհանուր դատողություններ կամ էլ հաղորդվում է պարբերաբար կրկնվող գործողության կամ երևույթի մասին. օրինակ՝ «Ով սովից մեռել, նա է լավ դրել» (Հ. Ռ., 16), կամ՝ «Կատարվեց այն, ինչ պատահում էր նրան դաժան ճակատամարտերի ճանապարհին» (Ս. Ա., Հ., 31)։

Ենթակա երկրորդական նախադասությունների կապը գլխավոր նախադասության հետ սովորաբար իրացվում է «որ», «թե» ստորադասական շաղկապներով. «ով», «որ», «ինչ», երբեմն նաև «երբ» հարաբերական բառերով։ Հարաբերական բառերին հաճախ կարող է ավելանալ նաև «որ» թարմատար շաղկապը «ով որ», «ինչ որ», «որը որ»։

Շաղկապներին և հարաբերական բառերին գլխավոր նախադասության մեջ կարող են համապատասխանել «նա», «այն», «ամեն ոք», «բոլորը», «ցուրաքանչյուրը», «մի բան» հարաբերյալ բառերը։

Այժմ քննարկենք ենթակա երկրորդական նախադասությունների և գլխավոր նախադասության կապակցության ժամանակ օգտագործվող վերը

թվարկված շաղկապներից ու հարաբերական բառերից յուրաքանչյուրի օգտագործման դեպքերը առանձին-առանձին։

Որ — ենթակա երկրորդական նախադասության և գլխավորի կապակցության համար ամենատարածված օգտագործումն ունի «որ» շաղկապը[2]։

Գեղարվեստական և գիտական-հրապարակախոսական գրականության լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ենթակա երկրորդական նախադասությունները գլխավոր նախադասության հետ միանում են «որ» շաղկապով հետևյալ դեպքերում։

1. Գլխավոր նախադասությունը միադիմի է և ցույց է տալիս դրություն, վիճակ։ Սա էլ իր հերթին բաժանվում է մի քանի տարատեսակների.

ա) Գլխավոր նախադասության ստորոգյալը բաղադրյալ է և ցույց է տալիս դրություն. «որ» շաղկապով միացող երկրորդական նախադասությունը բացահայտում է այն առարկան կամ երևույթը, որը գտնվում է տվյալ դրության մեջ. օրինակներ՝

«Զարմանալի է, որ չիմացաք հենց առաջին տեսնելուց» (Շ., 4, 417)։

«Նկատելի էր, որ նա կամենում էր մի բանի մասին խոսել» (Շ., 2, 364)։

Այս տիպի նախադասություններում սովորաբար գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ բառ չի լինում, և ենթակա երկրորդական նախադասությունը դրվում է գլխավորից հետո (լինում է վերջադաս)։ Սակայն երբեմն, երբ անհրաժեշտ է լինում շեշտել տվյալ դրության կամ վիճակի մեջ եղող առարկան (երևույթը), երկրորդական նախադասությանը կարող է համապատասխանել որևէ հարաբերյալ։ Որպես հարաբերյալ բառ հանդես են գալիս «մի բան» բառակապակցությունը և «սա», «դա» ցուցական դերանունները։ Առաջին դեպքում ենթակա երկրորդական նախադասությունը միշտ վերջադաս է լինում. օրինակներ՝

«Մի բան պարզ էր նրանց համար, որ դպրոցը այդ գործից հետ կանգնել չէր կարող» (Վ. Ա., 87)։

«Մի բան պարզ է միայն, որ անպայման պիտի գրեմ» (Գ. Մ., 362)։

Երբ գլխավոր նախադասության մեջ որպես հարաբերյալ հանդես են գալիս «սա» կամ «դա» ցուցական դերանունները, այդ դեպքում «որ» շաղկապով միացող ենթակա երկրորդական նախադասությունը սովորաբար լի-

---

[2] Պետք է նշել, որ «որ» շաղկապը ունի մեծ տարածում ստորադասական կապակցության մեջ։ Ժամանակի ընթացքում նա կորցրել է իր՝ կոնկրետ բնույթի երկրորդական նախադասություններ կապակցելու ֆունկցիան և այժմ գործածվում է ընդհանրապես գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցման համար, իսկ նախադասությունների կապակցության տարբեր բնույթը որոշվում է քերականական այլ միջոցներով։ Այդ է ցույց տալիս այն հանգամանքը, որ «որ» շաղկապով կարող են միանալ ենթակա, որոշիչ, հատկացուցիչ, խնդիր, պարագա և այլ երկրորդական նախադասություններ. օրինակ՝ «Ես գիտեմ, որ նա գալու է», «Նա, որ այստեղ էր, գնաց», «Գիրքը, որ գրված էր սեղանին, վերցրի» և այլն։ Այս նախադասությունների մեջ շաղկապը կատարում է երկու նախադասությունների կապի ձևական իրականացնողի դեր, չունենալով բարդ նախադասությանը որևէ իմաստային երանգ, որը հատուկ է մյուս շաղկապներին և հարաբերական բառերին։ Այստեղ գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև եղած իմաստային փոխհարաբերությունները արտահայտվում են քերականական այլ միջոցներով՝ նախադասությունների շարադասությամբ, բառային կազմով, բայի եղանակների և ժամանակների օգտագործմամբ և այլն։

նում է առաջադաս. գլխավոր նախադասությունը դրվում է երկրորդականից հետո և սկսվում է հարաբերյալով։ Վերջինս կարծես ամփոփում է երկրորդական նախադասության բովանդակությունը. օրինակ՝ «որ պետք է ջախջախվի Հիտլերը, դա ինձ համար անտարակուսելի է» (Հ. Ֆ., 53)։ Այս կառուցվածքի պարզ ստորադասական նախադասությունները ժամանակակից հայերենում գործածության մեջ են մտել վերջերս։

Երբ անհրաժեշտ է լինում առանձնապես շեշտել տվյալ դրության մեջ եղող առարկան կամ երևույթը, երբեմն գլխավոր նախադասությունը դրվում է երկրորդականից առաջ. ըստ որում կամ նրա բաղադրյալ ստորոգյալը ունենում է շրջուն շարադասություն, կամ էլ օգտագործվում են եղանակային բառեր, որոնց օգնությամբ ամբողջ ուշադրությունը կենտրոնացվում է ցուցական դերանվամբ արտահայտված հարաբերյալի (ձևական ենթակայի) վրա. օրինակներ՝

«Դա էլ հենց վատ է, որ ընտանիքներով են եկել» (Հ. Ֆ., 178)։

«Նա է զարմանալի, որ մինչև այժմ այդ մասին ոչ մի տեղ գրված չէ»։

Այս օրինակներից առաջինում գլխավոր նախադասության տրամաբանական շեշտը հարաբերյալի վրա դնելու համար օգտագործված են «էլ», «հենց» եղանակային բառերը, իսկ երկրորդ նախադասության մեջ այդ նույն նպատակով օգտագործված է ստորոգյալի շրջուն շարադասությունը։

բ) Ենթակա երկրորդական նախադասությունը գլխավորի հետ միանում է «որ» շաղկապով նաև այն դեպքում, երբ գլխավոր նախադասության մեջ դրություն կամ վիճակ ցույց է տրվում եղակի երրորդ դեմքով դրված կրավորական սեռի բայի միջոցով (վերջինս ունենում է չեզոք սեռի իմաստ). օրինակներ՝

«Գրքում գրված է, որ ամենից մեծ վտանգը նորմալից ավելի ջերմությունն է» (Վ. Ա., 99)։

«Բայց շուտով պարզվեց, որ եկողներից մեկը Ավագյանն էր» (Ն. Զ., Հ., 68)

Այս օրինակներում գլխավոր նախադասությունները նախորդների նման միագիտի են և ցույց են տալիս դրություն, վիճակ, որը, սակայն, այստեղ արտահայտված է կրավորակերպ չեզոք բայի եղակի երրորդ դեմքով։ Այն, թե ինչի մասին է խոսվում գլխավոր նախադասության մեջ, հայտնի է դառնում երկրորդական նախադասության միջոցով։

Այս տիպի բարդ ստորադասական նախադասություններում երկրորդական նախադասությունը սովորաբար լինում է վերջադաս, և գլխավորի մեջ նրան որևէ հարաբերյալ բառ չի համապատասխանում, իսկ երբ գլխավոր նախադասության մեջ առկա է լինում հարաբերյալ բառ, երկրորդական նախադասությունը կարող է լինել նաև միջադաս՝ դրվելով հարաբերյալ բառից անմիջապես հետո. օրինակ՝ «Այն, որ նա ծանոթ չէ իրադրությանը, զգացվում է հենց առաջին հայացքից»։

գ) «Որ» շաղկապով ենթակա երկրորդական նախադասությունը դրվում է նաև այնպիսի գլխավոր նախադասության մոտ, որի մեջ ստորոգյալն արտահայտված է դրություն կամ վիճակ ցույց տվող չեզոք սեռի բայի եղակի երրորդ դեմքով։ Այս դեպքում գլխավոր նախադասությունը միշտ աննենթակա է լինում, այսինքն չի ունենում հարաբերյալ բառ, իսկ գլխավորի ենթակայի պաշտոնը կատարող երկրորդական նախադասությունը միշտ ունենում է վերջադաս շարադասություններ. օրինակներ՝

«Հաճախ է պատահում, որ դյուղի երեխաները փորձում են որսալ Ավագյանի աղավնիները» (Ն. Զ., Հ., 20)։

«Երևում էր, որ անհանդիստ կոլտնտեսականն ասելիք ունի» (Հ. Թ., 41)։

Այս օրինակներում «պատահում է», «երևում է» չեզոք սեռի բայեր են, որոնք ցույց են տալիս դրություն, վիճակ, իսկ «որ» շաղկապով միացած երկրորդական նախադասությունները ցույց են տալիս, թե ինչին են վերաբերում դրանք և կատարում են ենթակայի ֆունկցիա։

2. Սակավ դեպքերում «որ» շաղկապով միանում են նաև գլխավորի ներգործական կամ չեզոք սեռերի զանազան նշանակություններ ունեցող բայերի ենթակայի պաշտոնը կատարող երկրորդական նախադասությունները. օրինակ՝

«Արյաց արքային, ասում էին, անհանգստացնում է և այն, որ հայ երիտասարդները մեծ խմբով գնում են Բյուզանդիա» (Ստ. Զ., Պ. Թ., 29)։

Պետք է նկատել, որ ընդհանրապես «որ» շաղկապով միանում են առարկա կամ որևէ երևույթ ցույց տվող ենթակա երկրորդական նախադասությունները, ըստ որում գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ բառի առկայությունը պարտադիր չէ։ Սակայն երբեմն «որ» շաղկապով միացած ենթակա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս անձ. այս դեպքում արդեն գլխավորի մեջ պարտադիր կերպով առկա է լինում «նա» հարաբերյալ բառը, որի կոնկրետ նյութական նշանակությունը բացահայտվում է երկրորդական նախադասության միջոցով. «նա» հարաբերյալը հանդես է գալիս որպես գլխավոր նախադասության ձևական ենթակա և այդ պատճառով միշտ դրվում է ուղղական հոլովով (եզակի կամ հոգնակի). օրինակ՝ «Իսկ նրանք, որ տեղ չէին գտել նստելու, ոտքի վրա խոնված էին պատերի տակ» (Ն. Զ., Հ., 55)։

3. Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն ենթակա երկրորդական նախադասությունները, որոնք ստեղծվել են հավելադրության միջոցով։

Պարզ նախադասության որևէ անդամը շեշտելու համար հաճախ այդ անդամի մոտ դրվում է «է» օժանդակ բայը «որ» շաղկապի հետ միասին։ Այդպիսով պարզ նախադասությունը բարդանում է. նախադասության շեշտված անդամը, օժանդակ բայի հետ միանալով, վեր է ածվում գլխավոր նախադասության բաղադրյալ ստորոգյալի, իսկ բուն նախադասության ստորոգյալը վեր է ածվում երկրորդական նախադասության ստորոգյալի և միանում է գլխավորին «որ» շաղկապով. օրինակներ՝

«Մի շաբաթից ավելի էր, որ դյուղը պատրաստվում էր այդ հանդեսին» (Զ. Դ., Բ., 48)։

«Հարցերի տարափ էր, որ տեղում էր հորս գլխին» (Ստ. Զ. Զ., Դ., 179)։

«Այնտեղ, սև ջրի չքնաղ եզերքներին էր, որ ապրում էր Հասոն» (Վ. Փ., 293)։

Այս նախադասությունները տարբերվում են «Մի շաբաթից ավելի դյուղը պատրաստվում էր այդ հանդեսին», «Հարցերի տարափ էր տեղում հորս գլխին» և այլ պարզ նախադասություններից միայն նրանով, որ նրանց մեջ առանձնակի ուշադրություն է դարձված նախադասության որևէ անդամի վրա, որը և վեր է ածվել բաղադրյալ ստորոգյալի։ Առաջին նախադասության մեջ շեշտված է գործողության կատարման ժամանակը, երկրորդում՝ ենթական, իսկ երրորդում՝ գործողության կատարման տեղը։

Սրանք են այն դեպքերը, երբ ենթակա երկրորդական նախադասությունները միանում են գլխավորին «որ» շաղկապի միջոցով։

Թե— Այս շաղկապը օգտագործվում է ենթակա երկրորդական նախադասությունը գլխավոր նախադասության հետ կապելու համար այն ժամանակ, երբ երկրորդական նախադասությամբ հաղորդվածին խոսողը վերաբերվում է կասկածով, համոզված չէ նրա ճշտության մեջ։ Սրանք ևս գրվում են դրություն, վիճակ ցույց տվող ստորոգյալների մոտ. օրինակներ՝

«Սկզբում ինձ թվաց, թե ականջի պատրանք է, գիշերային խորին լռության արդյունք» (Ն. Ր., 5, 11)։

«Չէր երևում, թե նա բաժանում է ընկերների խանդավառությունը» (Հ. Ֆ., 48)։

«Թե» շաղկապով ենթակա երկրորդական նախադասությունները միանում են գլխավորին նաև այն դեպքում, երբ վերջինիս ստորոգյալը դրված է լինում ժխտական ձևով և ցույց է տալիս երկրորդական նախադասությամբ տրված առարկայի կամ երևույթի տվյալ դրության կամ վիճակի մեջ չլինելը (տե՛ս վերևի երկրորդ օրինակը), կամ երկրորդական նախադասությունը պարունակում է անուղղակի հարցում. օրինակ՝ «Նրան քաջ հայտնի էր, թե տիկին Հայկանուշը որքան դժվարահավան է» (Բ. Թ., Պ., 116) կամ «Հայտնի չէր, թե գիշերվա որ ժամն է» (Հ. Ֆ., 199)։

«Թե» շաղկապ է օգտագործվում նաև այն ժամանակ, երբ գլխավոր նախադասության ստորոգյալը «թվալ» բայն է՝ դրված եզակի երրորդ դեմքով (դա կապված է նրա բառային իմաստի հետ)։ Օրինակ՝ «թվում էր, թե անտառը իր շշուկը ծիծաղի էր փոխել» (Վ. Փ., 382)։

«Թե» շաղկապով միացող ենթակա երկրորդական նախադասությունները սովորաբար լինում են հետադաս, սակայն երբեմն, շրջուն շարադասությամբ նրանք կարող են դրվել նաև գլխավոր նախադասությունից առաջ. օրինակ՝ «Թե նա տանջվում էր, այդ պարզ էր ինձ համար» (Շ., 4, 442)։ Այդ դեպքում գլխավոր նախադասությունը սկսվում է որևէ հարաբերյալով («այդ», «դա» և այլն)։

Երբեմն «թե» շաղկապին ավելանում է նաև «կարծես» եղանակային բառը, և ենթակա երկրորդական նախադասությունը միանում է գլխավորին «կարծես թե» բառակապակցությամբ։ Դրանով ավելի է ընդգծվում երկրորդական նախադասության գործողության ճշտության կասկածի տակ առնվելը. օրինակ՝ «Թվաց, կարծես թե ինչ որ մեկը դուռը բացեց» (Ն. Դ., 3, 63)։

Ով— «Ով» հարաբերական դերանվամբ միանում են միայն այն ենթակա երկրորդական նախադասությունները, որոնք ցույց են տալիս անձ և նկարագրության միջոցով տալիս են գլխավոր նախադասության գործողություն կատարողին։

Այս դեպքում գլխավոր նախադասության մեջ ենթական կամ բոլորովին բացակայում է, կամ էլ առկա է լինում «նա» հարաբերյալը, որն իր կոնկրետ նյութական նշանակությունը ստանում է երկրորդական նախադասության միջոցով. օրինակ՝ «Ով ձմեռը զկռե է գտել անտառի խորքում, նա կիմանա, թե ինչ բարիք է դա քաղցած մարդու համար» (Վ. Ա., Հ. Դ.)։ Այստեղ գլխավոր նախադասությունն է «նա կիմանա», որտեղ թեև ձևականորեն առկա է ենթական՝ «նա», սակայն ենթակայի պաշտոնը փաստորեն կատարում է «ով ձմեռը

գկեռ է գտել անտառի խորքում» երկրորդական նախադասությունը, որը միանում է գլխավորին «ով» հարաբերական դերանվամբ։

Հարաբերական դերանունները կատարելով գլխավոր և երկրորդական նախադասությունները կապակցելու ֆունկցիա, միաժամանակ կատարում են երկրորդական նախադասության որևէ անդամի պաշտոն։ «Ով» հարաբերականը, որպես երկրորդական և գլխավոր նախադասությունները կապակցելու միջոց, իր թվով համաձայնում է հարաբերյալի հետ, իսկ հարաբերյալի բացակայության դեպքում՝ գլխավոր նախադասության ստորոգյալի հետ։ Որպես երկրորդական նախադասության անդամ «ով»-ը դրվում է այն հոլովով, ինչ որ պահանջում է նրա՝ երկրորդական նախադասության մեջ կատարած ֆունկցիան։ Չպետք է կարծել, որ եթե երկրորդական նախադասությունը բնույթով ենթակա է, ուրեմն «ով» հարաբերականը միշտ պետք է դրվի ուղղական հոլովով։ Ճիշտ է, մեծ մասամբ նա իրոք դրվում է ուղղական հոլովով, բայց ոչ թե այն պատճառով, որ երկրորդական նախադասությունը ենթակա է, այլ որովհետև նա երկրորդական նախադասության մեջ կատարում է ենթակայի պաշտոն (երկրորդական նախադասությունը բացահայտում է գլխավոր նախադասության գործողությունը կատարողին, նրա կատարած մեկ այլ գործողությունը նկարագրելու միջոցով)։ Այդպես է վերևի օրինակում։ Այնտեղ «ով» հարաբերականը դրված է եզակի թվով, որովհետև գլխավոր նախադասությունն ստորոգյալը և հարաբերյալը ունեն եզակի թիվ և դրված է ուղղական հոլովով, որովհետև երկրորդական նախադասության մեջ կատարում է ենթակայի պաշտոն։ Իսկ հետևյալ նախադասության մեջ «Նա, ում ուղղված էր բողոքը, խղճի խայթ էր զգում» (Վ. Ա., Հ. Ր.), «ով» հարաբերականը դրված է եղակի թվով՝ համաձայնվելով գլխավորի ստորոգյալի հետ և տրական հոլովով՝ երկրորդական նախադասության մեջ կատարած իր պաշտոնի պահանջով (հանդիսանում է երկրորդական նախադասության հանգման անուղղակի խնդիրը)։

«Ով» հարաբերականին գլխավոր նախադասության մեջ կարող են համապատասխանել նաև «ամեն ոք» և «յուրաքանչյուրը» որոշյալ դերանունները. օրինակներ՝

«Յուրաքանչյուրը, ում հայտնի էր այդ, գովեստով էր խոսում նրա մասին»։

«Ամեն ոք, ով սիրում է, բանաստեղծ է» (Ն. Ր., 5, 51)։

«Ով» հարաբերականով միացող ենթակա երկրորդական նախադասությունը սովորաբար լինում է առաջադաս. օրինակ՝ «Ով գեղարվեստասեր է, իրավունք չունի Լևոնին չճանաչելու» (Շ., 4, 416)։

Ենթակա երկրորդական նախադասությունը հետադաս է լինում շրջուն շարադասության դեպքում, երբ անհրաժեշտ է լինում հարաբերյալը (հետևաբար նաև երկրորդական նախադասությունը) շեշտել։ Այդ դեպքում բարդ նախադասությունը ունենում է հետևյալ շարադասությունը։ Սկզբում դրվում է «նա» հարաբերյալը, որին անմիջապես հաջորդում է օժանդակ բայը, ապա նախադասության մյուս անդամները. երկրորդական նախադասությունը դրվում է գլխավորից հետո. օրինակ՝ «Միթե դու կարծում ես, թե նա է միայն բանաստեղծ, ով վարժվել է հանգերով ոտանավոր գրել» (Ն. Դ., 5, 51)։ Երբեմն երկրորդական նախադասությունը դրվում է հարաբերյալից անմիջապես հետո, այդ դեպքում այն լինում է միջադաս. օրինակ՝ «Նրանք, ովքեր ձրգ-

տում են հասնել մեջլիսի կողմից նավթի վերաբերյալ պայմանագրի վավերացմանը..., բորբոքում են պրովակացիոն աղմուկ» (Ս. Հ.)։

Ենթակա երկրորդական նախադասությունը լինում է միջադաս կամ վերջադաս նաև այն դեպքում, երբ գլխավոր նախադասության մեջ առկա են լինում «ամեն ոք» կամ «յուրաքանչյուրը» հարաբերյալները։

Պետք է ասել, որ հայերենում շաղկապներն ու հարաբերական բառերը դրվում են երկրորդական նախադասությունների սկզբում, սակայն երբեմն նրանք կարող են փոխել իրենց տեղը և դրվել երկրորդական նախադասության որևէ անդամից հետո։

«Ով» հարաբերականը կարող է փոխել իր տեղը և դրվել երկրորդական նախադասության որևէ անդամից հետո այն ժամանակ, երբ ցույց է տալիս ամբողջի մի մասը։ Այս դեպքում երկրորդական նախադասության սկզբում դրվում է այդ ամբողջը ցույց տվող անդամը բացառական հոլովով. իհարկե վերջինս էլ իր հերթին կարող է լրացումներ ունենալ. օրինակներ՝

«Շնչավորներից ով թև ունի, թռել գնացել է տաք երկրներ» (Վ. Ա., Հ. Գ.)։

«Ով գիտի, հիմա ով վեր է կենում, գլխին էս տեսակ գդակ է դնում» (Հ. Թ.)։

Վերջին օրինակում «ով» հարաբերականը դրվել է երկրորդական նախադասության ժամանակի պարագայից հետո։

Երբ ենթակա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս անձ, այն կարող է միանալ նաև «որ» հարաբերական դերանվամբ. որը համանիշ է «ով»-ին և ունի կիրառության նույն ոլորտը։ «Որ» հարաբերականով միացող երկրորդական ենթակա նախադասությունները ունենում են կամ վերջադաս կամ միջադաս շարադասություն. օրինակներ՝

«Միայն թե կային այնպիսիները, որոնք ոտաբոբիկ էին դարձել» (Վ. Փ., 345)։

«Իմ մանկության ընկերներից նրանք, որոնք մեացին, ականատես եղան պատմական մեծադիր դեպքերի» (Դ. Մ., 333)։

Առաջին օրինակում գլխավոր նախադասության մեջ որպես հարաբերյալ հանդես է եկել «այնպիսի» ցուցական դերանունը, որն օգտագործված է գոյականաբար։

«Ով» հարաբերականով միացած ենթակա երկրորդական նախադասությունները օգտագործվում են այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում ընդհանուր դատողություններ կատարել կամ եզրակացություններ անել։ Այդ պատճառով էլ նրանք շատ են գործածվում ժողովրդական ասացվածքների, առածների մեջ։ Օրինակ «Ով ալարի, ոչ դալարի», «Ով չուստ, նա կուշտ», «Ով աշխատի, նա ուտի» և այլն։

ԻՆՉ — Ենթակա երկրորդական նախադասությունը գլխավորի հետ միանում է «ինչ» հարաբերական դերանվամբ այն դեպքում, երբ ընդհանուր առմամբ խոսում է որևէ երևույթի մասին. գլխավոր նախադասության ստորոգյալը միշտ արտահայտվում է եզակի երրորդ դեմքով։ Օրինակ «Կյանքս մաշվեց վերջացավ, ինչ հույս արի, փուչ ելավ» (Հ. Թ., 104)։ «Ինչ»-ով միացող երկրորդական նախադասությանը երբեմն կարող են համապատասխանել «այն», «այն ամենը», «այն բոլորը» հարաբերյալները։ Այս դեպքում երկրորդա-

կան նախադասությունը դրվում է հարաբերյալից անմիջապես հետո և այդ պատճառով կարող է լինել միայն միջադաս կամ վերջադաս. օրինակներ՝

«Այն, ինչ լսել ու տեսել էր նա, ինչքան որ տարօրինակ, նույնքան էլ անհավատալի էր» (Հ. Ռ., 186)։

«Ռուբենը զարմացած հետևում էր այն բանին, թե որքան արագ ու հեշտ կատարվեց այն ամենը, ինչ իրեն անասելի ծանրություն էր պատճառում» (Ս. Խ., Հ., 255)։

«Բոլոր հուշերը, բոլոր խոսքերը մարել են այնտեղ,
Եվ այն, ինչ քաղցր էր, երազ,—անցել է հավետ» (Վ. Տ., 144)։

Ենթակա երկրորդական նախադասությունը միանում է գլխավորին, «ինչ» հարաբերականով նաև այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում շեշտել գլխավոր նախադասության որևէ անդամը. օրինակներ՝

«Մի քանի օր Ի.ր, ինչ Գեորգ Մարզպետունին և Վահրամ Սեպուհը վերադարձել էին Գառնի» (Մ., Գ. Մ., 283)։

«Արդեն մի շաբաթից ավել էր, ինչ պապը իրիկնաղեմին չէր նստում աղբյուրի քարին» (Ս. Խ., Հ., 31)։

ԵՐԲ — Երբ բարդ ստորադասական նախադասության մեջ ցանկանում են ընդգծել գլխավոր նախադասության ստորոգյալի և ենթակա երկրորդական նախադասության միջև եղած ժամանակային հարաբերությունը, որպես կապակցության միջոց օգտագործում են «երբ» հարաբերական բառը (շատ հազվադեպ). օրինակներ՝

«Էլուշին անչափ դուր է գալիս, երբ փողոցում զբոսնողները նրան ակնարկելով շշնջում են» (Ն. Զ., Հ., 34)։

«Առսեն Տոնոյանի կարծիքով սխալ է, երբ բամբակենու շարքերի մեջ 80 սմ. արանք են թողնում» (Հ. Ռ., 41)։

Ենթակա երկրորդական նախադասությունների կապակցության ժամանակ հաճախ հարաբերական բառերին ավելանում է «որ» թարմատար շաղկապը (ով որ, ինչ որ և այլն), որը, սակայն, ոչ մի ազդեցություն չի թողնում նախադասության իմաստային կողմի վրա. օրինակներ՝

«Ով որ քաջություն չունի դիմադրելու, թող հեռանա» (Ա. Շ., 262)։

«Եվ այն, ինչ որ ես քեզ պիտի պատմեմ, սիրելի ընթերցող, թող քեզ համար հնքիաթ կամ զրույց չթվա» (Ե. Զ., 57)։

Սրանք են ենթակա երկրորդական նախադասությունների՝ շաղկապներով ու հարաբերական բառերով կապակցության դեպքերը։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Բ., ՍՑՍ — Ակսել Բակունց, Սև ցելերի սերմնացանը, Երևան, 1933 թ.
2. Գ. Մ. — Գուրգեն Մահարի, Երկեր, Երևան, 1954 թ.
3. Հ. Թ. — Հովհաննես Թումանյան, Երկեր, Երևան, 1938 թ.
4. Հ. Ռ. — Հրաչյա Ռոչար, Մեծ տան դավակները, Երևան, 1954 թ.
5. Մ., Գ. Մ. — Մուրացան, Գեորգ Մարզպետունի, Երևան, 1931 թ.
6. Ն. Դ. — Նար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1946 թ.
7. Ն. Զ., Հ. Նաիրի Զարյան, Հայրավան, Երևան, 1919 թ.
8. Շ. — Ալ. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, IV հատոր, Երևան, 1950 թ.
9. Ստ. Զ., Պ. Թ. — Ստ. Զորյան, Պապ Թագավոր, Երևան, 1954 թ.

10. Ս. Ա. Հ. — Սերո Խանզադյան, Հողը, Երևան, 1954 թ.
11. Ս. Հ. — Սովետական Հայաստան, օրաթերթ.
12. Վ. Ա., Հ. Ռ. — Վախտանգ Անանյան, Հովազաձորի գերիները.
13. Վ. Փ. — Վրթանես Փափազյան, Ընտիր երկեր, Երևան, 1951 թ.
14. Ա. Շ. — Աղավնի, Շիրակ. Երևան, 1954 թ.
15. Ե. Հ. — Եղիշե Չարենց, Երկեր, Երևան, 1932 թ.
16. Ֆ. Թ., Պ. — Ֆր. Թափալցյան, Պատերազմ, 1-ին հատոր, Երևան, 1946 թ.
17. Զ. Դ., Ֆ. — Զ. Դարյան, Ֆանուելյուն, Երևան, 1951 թ.
18. Ստ. Զ., Զ. Գ. — Ստ. Զորյան, Զմռան գիշերներ, Երևան, 1938 թ.
19. Վ. Տ. — Վ. Տերյան, Երկերի ժողովածու, 1-ին հատոր, Երևան, 1950 թ.